

Դոկտ. Ժիրայր Քոչարյան

**Հայերի ցեղասպանությունը և Գերմանիայի ներկայիս  
դիրքորոշումը**

գեկուցում  
Ապրիլ 2005

Հայ ժողովրդի և Մերձավոր Արևելքի մյուս ժողովուրդների դժբախտությունը սկսվեց, երբ մոնղոլները թրքական ցեղախմբերին հաղթելով՝ նրանց քշեցին դեպի Արևմուտք, որոնք էլ աստիճանաբար հաստատվեցին Պարսկաստանում, Հարավային Կովկասում և Փոքրասիայում: 1555թ-ին, Ամասիայի պայմանագրով տեղի ունեցավ Հայաստանի առաջին բաժանումը՝ Պարսկաստանի Սաֆավիդների և թուրք օսմանների միջև: Շուրջ մեկ դար հետո, Դիարբեքիի պայմանագրով, թրքական գերիշխանության բաժինը Արևմտյան Հայաստանում մեծացավ: Մշակութապես և քաղաքականապես զարգացման ցածր մակարդակի վրա գտնվող թուրքերի ներխուժումը Փոքր Ասիա ունեցավ աղետալի հետևանք՝ նստակյաց քրիստոնյա ժողովուրդների՝ հույների, արամալեզու քրիստոնյաների և հայերի համար, որոնց մշակութային և տնտեսական զարգացումը խախտվեց: Այս պատճառաբանված չէր կրոնական տարբերությամբ, քանի որ արաբական մշակույթը նույնպես նահանջ ապրեց այնքան ժամանակ, որքան որ նրանք թրքական լծի տակ էին գտնվում: Թրքական գերիշխանության ներքո նվազեց նաև հունական մշակութային կենտրոնների արժեքը: Հայաստանում թրքական տիրապետության ծավալումից հետո հայկական մշակույթը զարգացավ ոչ թե Հայաստանում այլ նրա սահմաններից դուրս:

Մինչև իրենց բռնագաղթն ու վերջնական բնաջնջումը Փոքրասիայի քրիստոնյա ժողովուրդները դարեր շարունակ դատապարտված էին ճնշման, կեղեքման, բռնի իսլամացման և իրավունքի կամայական ոտնահարման:

Օսմանյան Սուլթանության կողմից նվաճված ժողովուրդների անկախության ձգտումները և եվրոպացիների դեմ կրած պատերազմական պարտությունները ստիպեցին թուրքերին դիմել նախ օսմանիզմին, համաիսլամականությանը և վերջապես համաթրքականությանը: Թուրքերը համաթրքականությամբ և համաթուրանականությամբ ցանկանում էին թրքացնել Ադրիական ծովից մինչև չինական պատ ընկած երկրատարածքները՝ կազմելով մեծ պետություն՝

Օսմանյան Սուլթանության գլխավորությամբ: Բոլոր մյուս ժողովուրդները, որոնք խոչընդոտում էին նրա ստեղծմանը, պիտի թրքացվեին, բռնի տեղահանվեին և կամ բնաջնջվեին: 1894-1896 թթ կոտորածները, 1909թ-ի Կիլիկիայի հայերի ջարդերը և մյուս արյունահեղությունները ապացույցն են նման ծրագրի, այդ իսկ պատճառով Առաջին աշխարհամարտի ընթացքում իրականացված հայոց ցեղասպանությունը ոչ թե եզակի դեպք կամ դժնախտ պատահար էր, այլ ինսամբով նախագծված և հետևողականորեն իրականացվող բնաջնջման գազաթնակետ:

1913թ-ից սկսած երիտթուրքերի ազգայնամոլ իշխանությունը սկսեց հայկական գավառներ ուղարկել այնպիսի պաշտոնյաներ, որոնք, մասնակցել էին կոտորածներին և փորձ ունեին: 1913թ-ից իրականացվեց և 1914թ-ին ավելի մեծ թափ առավ հայ ազգաբնակչության գինաթափումը, որոնց երիտթուրքերի հեղափոխությունից հետո պահանջել էին զինվել, քանի որ օսմանյան պաշտոնյաները ի վիճակի չէին պաշտպանել քրիստոնյաներին: Մինչև 1915թ-ի ապրիլի 12-ը «Դաշնակցություն» կուսակցության ղեկավար անդամներից շատերը գտնվում էին բանտերում, թեև այս սոցիալ-հեղափոխական կուսակցությունը 20-րդ դարասկզբին դաշնակցել էր երիտթուրքերին

սուլթան Համիդ II-ի բռնակալության դեմ: Արդեն 1914թ-ի հուլիսի 14-ին ձերբակալվել էին Հնչակյան կուսակցության ղեկավարները, որոնք 1915թ-ի հուլիսի 15-ին կախաղան հանվեցին Կ.Պոլսո Բայազիտ հրապարակում իբրև ներքին գործոց նախարար Թալաթ փաշայի սպանության կազմակերպման մեղավորներ:

1915թ-ի ապրիլի 24-ից մինչև մայիսի 19-ը օսմանյան բոլոր քաղաքներում տեղի ունեցան անվանի հայերի ձերբակալումներ, տանջահարումներ և սպանություններ: Կ.Պոլսում, որը վաղ բյուզանդական ժամանակաշրջանից սկսած հայկական մշակութային խոշոր կենտրոններից մեկն էր, մինչև ապրիլի վերջ ձերբակալվեցին շուրջ 2345 հայեր, որոնց մեջ նաև անվանի բանաստեղծներ Դանիել Վարուժանը, Սիամանթոն և Ռուբեն Սևակը:

Նրանց արտաքսեցին Անքարայի մոտ գտնվող Չանքերի ավանը և Այաշ գյուղը, որտեղ շատերը մահացան տանջանքներից այդ թվում նաև Վարուժանն ու Սիամանթոն: Մյուսները արտաքսվեցին Դիարբեքիր՝ լրացուցիչ հարցաքննության, տանջահարության ու սպանոհի: Գրիգոր Չոհրաբը և Վարդգես Սարանգուլյանը ճանապարհին խեղդամահ արվեցին:

1914թ-ի հոկտեմբերից 16-ից 60 տարեկան, որոշ վայրերում նույնիսկ 70 տարեկան հայերին ստիպողաբար աշխատեցնում էին բեռնափոխադրության և ճանապարհաշինության մեջ: 1915թ-ի փետրվարի վերջերից հայ գինապարտները իրավունք չուներին այլևս զենք կրել: Դրա փոխարեն նրանք կցվեցին զիվորական ամբողջություններ կառուցող խմբերին: Սրանք, փաստորեն, քրիստոնյա ազգաբնակչության համար նախատեսված բռնի աշխատանքային միավորումներ էին: Աշխատանքների ավարտից հետո վերապրողները սպանվում էին որպես կանոն սպիտակաբուրներով:

Մարտի վերջերին սկսվեց հայ ազգաբնակչության մնացյալ մասի տեղանումները, սկզբում Կիլիկիայում, այնուհետև, 1915թ-ի հունիսի վերջերից Տրապիզոնի, Սեբաստիայի, Դիարբեքիրի և մասամբ Բաղեշի գավառներում: Օգոստոս և սեպտեմբեր ամիսներին հաջորդում է հայերի բռնագաղթը արևմտյան Անատոլիայից, իսկ աշնանը Սիրիայի և Իրաքի հյուսիսային քաղաքներից: Արդեն ամռան վերջում բաղդադահայերը բռնագաղթվել էին Մոսուլ: Բռնագաղթի հրամանը սովորաբար մուսուլմանների միջոցով էր ազդարարվում ժողովրդին, երթերից 3 օր առաջ, որոշ վայրերում նույնիսկ մի քանի ժամ առաջ: Բռնագաղթը ուղեկցվում էր շարդով, հատկապես արևելյան գավառներում, այսինքն բուն հայկական բնակավայրերում: Տղամարդկանց գատելով իրենց ընտանիքներից, բռնագաղթի հենց սկզբում՝ իրենց բնակավայրերից ոչ հեռու, կոտորում էին: Անպաշտպան կանանց ու երեխաներին՝ կողոպտում, նսեմացնում, տանջահարում և վաճառում ստրկության:

Մինչև 1915թ-ի հոկտեմբեր ամիս 300.000 բռնագաղթվածներ են Հալեպի վրայով քշվել Եփրատ գետի ափերը, Դեր-Չօրից մինչև Տիգրիս, Մուսուլի շրջանների անապատներ, որտեղ Օսմանյան պետությունը պաշտոնապես գաղթավայր էր հայտարարել: Շուրջ 870.000 բռնագաղթված հայեր քշվել են Սիրիայի և Իրաքի հյուսիսային ափերին գտնվող համակենտրոնացման ճամբարները, որտեղ ենթարկվել են աննկարագրելի տանջանքների և ապրել ողբերգական ու աղետալի պայմաններում: Կարճ ժամանակում տասնյակ հազարներ մահացել են սովից և համաճարակից: Սակայն երիտթուրքական կառավարության կողմից սպանոհի այսօրինակ ձևը համարվում էր ժամանակատար, ինչպես նաև հայոց հոծ համախմբումները հակասում էին եթնիկական բնաջնջման իրենց նախագծին: Ճիշտ այդ պատճառով երիտթուրքերի վարչակարգը 1916թ-ի գարնանը կազմակերպեց զանգվածային սպանություններ, որոնց հետևանքով համակենտրոնացման ճամբարները մեկը մյուսի հետևից վերացան:

Պատկերը ամբողջական դարձնելու համար ուզում եմ նաև նշել, որ բռնագաղթը բոլոր վայրերում միանման չէր ընթանում, քանի որ գործելակերպը վերջիվերջո կախված էր տվյալ գավառի գավառապետից. Բաղեշի գավառի հայերի մեծամասնությունը չտեղահանվեց, այլ տեղում կոտորվեց, ինչպես երեկ տկ. Թ.

Հոֆմանը իր գեկույցում նշեց, հաճախ հայերին քշում էին մի մեծ բնակարան և հրկիզում: 1919թ-ի ապրիլին Տրապիզոնի նահանգապետ Ջեմալ Ազմիյի դեմ քրեական դատավարության ժամանակ, խոսվեց աներևակայելի սարսափազդու դաժանությունների մասին, որին ենթարկվել են 3.000 հայ որբեր: Տրապիզոնի կարմիր խաչ հիվանդանոցում թունավորել են մանուկներին, ծծկեր երեխաներին խեղդամահ են արել ջրի գուլորշիով, որոնց դիակները թափել են Սև ծով, մնացած երեխաներին ողջ-ողջ թափել ծովը: Ջեմալ Ազմին 15 երիտասարդ հայուհիների արգելափակել էր նույն հիվանդանոցում, որտեղ էլ նահանգային վարչության անդամները հաճախ իրենց անասնական հաճույքներին հագուրդ տալու համար խրախճանքներ էին կազմակերպում: Ըստ թուրք վկաների 1919 թ-ի ապրիլի 12-ին տված ցուցմունքի՝ այս երիտասարդուհիներն էլ վերջում սպանվել են, և այս բոլորը կատարվել է կարմիր խաչի հիվանդանոցում, որը պետք է ծառայեր հումանիստական նպատակների:

Որպես հետևորդ մի ընտանիքի, որը Մշո կոտորածների ժամանակ կորցրել է 57 ազգական, վիրավորված եմ զգում, որ Բեռլինում՝ Քոլումբիադամ փողոցում գտնվող գերեզմատանը թաղված թուրք զանգվածային մարդասպան-սադիստներ Ջեմալ Ազմիի և Բեհաեդին Շաքիրի (պատժվել են հայ վրիժառուներ Արամ Երկանյանի և Արշավիր Շիրակյանի կողմից 1922թ-ի ապրիլի 17-ին) գերեզմանները թուրքերի կողմից պաշտոնապես պատվո դամբարաններ են հայտարարվել:

Ցեղասպանության բնորոշիչ կողմերից մեկն էլ ցեղասպանված ժողովրդի մշակութային արժեքների ավերումն է: Կ.Պոլսո պատրիարքարանի տվյալների համաձայն Արևմտահայաստանում Առաջին համաշխարհային պատերազմից առաջ գոյություն ունեին 2200 վանքեր և եկեղեցիներ, որոնցից առնվազն 2150-ը ցեղասպանության օրերին կողոպտվել, հրկիզվել և ավերվել են, այդ թվում նաև վաղ քրիստոնեական շրջանին պատկանող գլուխգործոցներ (նաև Մշո Սուրբ Կարապետ վանքը):

Թալանների ժամանակ ավելի քան 20.000 ձեռագիր մատյաններ, ինչպես նաև վաղ տպագիր գրքեր ոչնչացվել են, մեծ վնաս հասցնելով ոչ միայն հայկական այլ նաև համամարդկային մշակույթին, քանի որ մատյանների պատկերագրուման և գրատպագրության ասպարեզում հայերը կարևոր ներդրում ունեն համաշխարհային մշակույթում: Սակայն առ այսօր թրքական կառավարությունը չարունակում է վարել հայկական ոգեղեն և նյութական մշակույթի կանխամտածված ոչնչացում, թեպետև Թուրքիան մի շարք պայմանագրեր է ստորագրել՝ պահպանելու ազգային փոքրամասնության մշակութային ժառանգությունը:

Հայերի բնաջնջման պատասխանատվությունը կրում է «Միություն և հառաջադիմություն» կուսակցության 12 անձերից բաղկացած կենտրոնական կոմիտեն, հատկապես՝ ներքին գրծոց նախարար Թալաթի, պատերազմի նախարար Էնվերի և ծովուժի նախարար Ջեմալի կազմած եռյակը: Երեկ արդեն հիշատակված «Թեղքիլիաթ Մաքսուտե» հատուկ կազմակերպությունը նրանց գլխավոր գործիքն էր հանդիսանում: Նրա անդամների քանակը բնաջնջման գազաթնակետին հասել է 30000-ի, իսկ բնաջնջման ծրագիրը եղել է շատ ընդարձակ: Առաջին համաշխարհային պատերազմից առաջ հայերի թվաքանակը Օսմանյան սուլթանությունում եղել է շուրջ 2,5 միլիոն, Լոզանի պայմանագրի ժամանակ մնացել է միայն 240.000, որոնց մեծ մասն էլ քեմալականների և հանրապետական Թուրքիայի օրոք կոտորվել և արտաքսվել են: 1923թ-ից մինչ այսօր կառավարող թրքական բոլոր իշխանությունները ուրացել են Օսմանյան Սուլթանության քրիստոնյա ժողովուրդների ցեղասպանությունը: Փոքրասիայում,

երբեմնի քրիստոնեական խոշոր կենտրոններից մեկում, պատերազմից առաջ դեռևս 5 միլիոն քրիստոնյաներ էին բնակվում, այսօր, ցեղասպանությունից 90 տարի անց, մնացել են 80.000, որոնց մեծ մասը ապրում է Կ.Պոլսում:

Ավերումից մասամբ զերծ մնացած հայ ճարտարապետական կոթողներից շատերը այսօր կիսավեր են կամ վերջնական ավերման եզրին: Գրեթե բոլոր հայկական տեղանունները փոխարինվել են թրքականով, իսկ Յայաստան բառը որպես երկրանուն, դեռևս 19-րդ դարի 2-րդ կեսին էր փոխարինվել Արևելյան Անատոլիայով:

Ցեղասպանությունից 90 տարի հետո էլ պատկերը չի փոխվել. Թրքական իշխանությունները, զանգվածային լրատվամիջոցները, գրեթե ողջ թուրք մտավորականությունը և անգամ արտասահմանում ապրող թուրքերի մեծամասնությունը ժխտում են ցեղասպանությունը և անտեսում ցեղասպանությունը վերապրածների և նրանց սերունդների վերադարձը հայրենիք: Թուրքերը բոլոր ոլորտներում աջակցում են իրենց արյունակից ադրբեջանցիներին, ընդհուպ մինչև Դեմոկրատական Գերմանիայի զինապաշարներից ձեռք բերված ռազմամթերքով, որը Թուրքիային հանձնեց Գերմանիայի Դաշնային Յանրապետությունը, ինչպես նաև 2000 պաշտոնապես թոշակառու հայտարարված զինծառայողներով, որոնք խորհրդատուներ էին ադրբեջանական բանակում: 1993-ից մինչև այսօր Թուրքիան հովանավորում է 1989թ-ից ի վեր Ադրբեջանի կողմից Յայաստանի և Արցախի նկատմամբ վարող տնտեսական շրջափակման քաղաքականությունը, թեպետև Յայաստանի Յանրապետությունը առաջարկել և առաջարկում է դիվանագիտական հարաբերություններ առանց նախապայմանների:

Անժխտելի է, որ հայ ժողովրդի ողբերգության գլխավոր պատասխանատուն Թուրքիան է, սակայն մի շարք պետություններ նույնպես կրում են պատասխանատվության իրենց բաժինը: Այս կապակցությամբ կցանկանայի անրադառնալ այդ պետությունների ունեցած դերին և դիրքորոշմանը, որոնք ինչպես Առաջին համաշխարհային պատերազմում, այնպես էլ այսօր մեծ ազդեցություն ունեն համաշխարհային քաղաքականության վրա:

Սովետական Ռուսաստանը 1917թ-ին Լենինի օրոք տված խոստումը, որի համաձայն «Թուրքահայաստանի ապագան պետք է որոշվեր ռեֆերենդումով», շուտափույթ մոռացավ: Ռուս-թրքական պայմանագրով (Մոսկվա, 1921) և Կարսի երեք կողմանի պայմանագրով (1922) Կարսի և Արդահանի շրջանները հանձնվեցին Թուրքիային: Թրքական ճնշման ներքո Արևելյան Յայաստանի տարածքներից Նախիջևանն ու Արցախը անցավ Ադրբեջանի կազմի մեջ նույն այն անիրականալի հույսերով, ինչպիսին այսօր Եվրոմիությունն է փայփայում, որ «բարի ընդհանրացումով» ազդեցության ոլորտներ կստեղծի Մերձավոր Արևելքի իսլամական պետություններում:

Խորհրդային Միությունում գիտության, գրականության և հրապարակախոսության մեջ Արևմտյան Յայաստանը տաբու էր, ցեղասպանությունը բնավ չճանաչվեց, նույնիսկ ցեղասպանության հուշահամալիրի կառուցումից հետո էլ ապրիլի 24-ը չդարձավ պաշտոնական հիշատակի օր::

ԱՄՆ-ն մոռացավ 1920թ-ի այսպես կոչված վիլսոնյան որոշումը և որպես հառնող գերտերություն դիմեց Թուրքիայի համագործակցությանը՝ ի դեմ Խորհրդային Միության:

Մեծ Բրիտանիան, որը հաղթական պետություններից ամենահամառը հանդիսացավ՝ պատժելու հայերի և հույների կոտորածների պատասխանատու երիտթուրքերի պարագլուխներին, իր գլուխը ևս խոնարհեց քեմալական սպառնալիքների առաջ և ընտրեց ամերիկյան ուղին:

Ֆրանսիան բավարարվեց Կիլիկիայում ծխախոտի մենաշնորհային պայմանագրեր կնքելով և 1939թ-ին Ալեքսանդրեթի Սանջակը և դրա հետ միասին տեղի քրիստոնյա ժողովուրդներին հանձնեց թուրքերին, այսուհանդերձ Ֆրանսիան մնում է Առաջին համաշխարհային պատերազմի միակ հաղթական երկիրը, որը հայոց ցեղասպանությունը օրենքով ճանաչել է, հասկանալի է, որ այստեղ մեծ դեր են ունեցել տեղի հայկական համայնքների և ցեղասպանության ճանաչման հանձնախմբերի քրտնաջան աշխատանքները:

Ո՞րն է Գերմանիայի բռնած դիրքորոշումը, որը Մոլթթեի (գերմ. գորական 1835-1839) ժամանակներից ի վեր, Թուրքիայի գինվորական խորրդդատուն, քաղաքական հովանավորողը և ռազմական դաշնակիցն է:

Ցեղասպանության ճանաչման հանձնախմբի խնդրագրում, որը 2000թ-ի ապրիլին հանձնվեց բունդեսթագի խնդրագրերի հարցերով զբաղվող հանձնախմբին, գրված է. «Գերմանիան, լինելով Թուրքիայի ռազմական դաշնակիցը, իր հատուկ դերն է ունեցել թե՛ հայկական և թե՛ թրքական պատմության մեջ: Ի տարբերություն Թուրքիայի դեմ պատերազմող երկրների, Գերմանիան Թուրքիայի գրեթե բոլոր նահանգների վարչակենտրոններում հյուպատոսություններ է ունեցել, որոնց առկայությունը թույլ էր տալիս Գերմանիային ճշգրիտ եղանակով փաստագրել հայերի բնաջնջման բոլոր հանգրվանները: Որոշ գերմանացիներ, որոնք ծառայում էին թրքական բանակում, մասնակցում էին հայ քաղաքացիների դեմ ուղղված գինվորական գործողություններին: Կայսերական Գերմանիայի պետական գործիչները լռելյայն ընդունեցին հայոց ցեղասպանությունը՝ հանուն «գերագույն շահախնդրության» և Թուրքիայից եկող լրատվությունը ենթարկեցին գրաքննության: Որոշ թուրք ոճրագործներ պատերազմից հետո Գերմանիայի բարձրաստիճան քաղաքական գործիչների օգնությամբ ապաստան գտան Գերմանիայում, թեպետև նրանք 1919թ-ին Թուրքիայում որպես պատերազմական ոճրագործներ և հայերի զանգվածային մարդասպաններ մահվան էին դատապարտված: Գերմանիան, հրաժարվելով հանձնել ոճրագործներին, արգելք հանդիսացավ օրինական եղանակով հայերի ցեղասպանության արծարծման առաջին և միակ փորձին»:

Կցանկանալի հավելել նաև, որ օսմանյան հրամանատարությունը հազարավոր հայ աշխատավորներ էր տրամադրել Բեռլին-Բադդադ երկաթուղու շինարարությանը՝ անվճար և բռնի աշխատելու: Բեռլին-Բադդադ երկաթուղին հանդիսանում էր Արևելքում Գերմանիայի ամենափառավոր շինությունը, որը պատերազմի օրոք մեծ դեր ունեցավ զենք ու զինամթերքի տեղափոխման ժամանակ:

Գերմանական հասարակական կարծիքը հայերի մասին բացասական էր: Սա է փաստում նաև Վիլհելմ Լիթնի «Պարսկական մեղրամիս» գիրքը: Յեղիակը Թեհրանում կայսերական Գերմանիայի դեսպանության անդամ էր և 1916թ-ին Եփրատ գետի ափերով Բադդադից դեպի հյուսիս-արևմուտք Գերմանիա ուղեվորվելով՝ ականատես էր եղել հայկական ցեղասպանությանը: Անտեսելով տեսածը՝ նա հայոց բնաջնջումը թուրքերի կողմից համարել է մաքուր հատում: Իր տեսակետը խտացնելով այդ օրերին գերմանական գինվորականության և դիվանագիտության մոտ տարածում գտած հակասեմիտական և հակահայկական նախադասություններով, ավելացնում է. «Յայերը հակառակ իրենց հնդկրոպական լեզվին պատկանում են Մերձավոր Արևելքի ռասսային: Նրանք շատ ավելի քիչ են խառնվել արևելյան արյանը, քան հրեաները: Թե՛ հայերի և թե՛ հրեաների մոտ երկարատև ճնշման հետևանքով առաջացել է տեսակավորող և հակատեսակավորող ազդակ, արդյունքը՝ մարդիկ, որ զգվանքի հակում ունեն հրեաների նկատմամբ, առավել զգվանք են զգում հայերի նկատմամբ: Ակնառու է,

որ քրիստոնյա միսիոնարներից բացի Արևելքում գտնվող հյուսիսային եվրոպացիները բացահայտ և հաճախ բուռն հակակրակներ ունի հայերի նկատմամբ»:

Այս գիրքը լույս տեսավ Վայմարյան հանրապետության օրոք, 1925թ-ին, որն էլ խոչընդոտ հանդիսացավ հանրության կողմից ցեղասպանության և Թուրքիայի հետ պատերազմական դաշնակցության քննադատաբար արժարժմանը: Այս հարցը շոշափվեց նաև 1921թ-ին Բեռլինում տեղի ունեցած Սողոմոն Թեիլերյանի քրեական դատավարության ժամանակ: Պրուսական արդարադատության նախարարությունը և արտգործնախարարությունը ջանք չխնայեցին հրեշավոր մարդասպանի սպանության դատավարությունը իրենց ցանկացած հունով ընթացք տալու, այնպես որ ինդիքի քաղաքական կողմը լայն չափով չպարզաբանվեց: Թալաթի դին Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ տարվեց Թուրքիա և թաղվեց Կ.Պոլսո ալյասպես կոչված հերոսների բլուրում:

Դաշնային Գերմանիայի պատմության մեջ էլ առկա են դեպքեր, երբ արտգործնախարարությունը հանդուրժել և մինչև անգամ հովանավորել է Թուրքիայի ազդեցությունն ու միջամտությունը Գերմանիայի ներքին քաղաքական խնդիրներում: 1985թ-ին Բրեմեն քաղաքում հայերի, ասորիների և արամալեզու քրիստոնյաների ցեղասպանության գոհերի հիշատակին նվիրված մի միջոցառման ժամանակ ոստիկանությունը բռնագրավեց այդ առիթով պատրաստված փաստագրական գրքուկները (թրքական մամուլի հակահայկական թղթակցությունները): 2001թ-ին թրքական դիվանագիտական մարմինները խոչընդոտ են հանդիսացել Լեփսիուսի տան բացմանը և այս տարվա սկզբին էլ փորձ արեցին հայոց ցեղասպանության մասին հիշատակվող նախադասությունը հանել Բրանդենբուրգի երկրատարածքի դպրոցական դասագրքերից:

Ցեղասպանության ճանաչման հանձնախմբի ներկայացրած խնդրագիրը մերժվեց Բունդեսթագի կողմից (խնդրագրի հետ հանձնվել էր 18.000 ստորագրություն, որից 12.000 Թուրքիայի քաղաքացիների ստորագրություն էին):

Բունդեսթագի պատգամավորներին և քաղաքական գործիչներին թվում է, թե Թուրքիան երբևէ կտրաբաժնի իր անցյալը, անհրաժեշտ է միայն նրան ժամանակ տալ: Նկատի ունենալով Թուրքիայի՝ հայոց ցեղասպանության 90 տարիների ուրաջումը՝ միամիտ և կասկածելի է թվում այս դիրքորոշումը: 2004թ-ի դեկտեմբերի 17-ին Թուրքիայի ԵՄ անդամակցության բանակցությունների ժամանակ Դաշնային Գերմանիայի քաղաքական գործիչների համար ոչ՝ ցեղասպանության ջնդուրման փաստը, ոչ՝ փոքրամասնությունների և կանանց իրավունքների ոտնակոխումը Էական դեր չկատարեցին:

Որպես հայ և մարդու իրավունքների պաշտպան կազմակերպության անդամ, ի մի բերելով այս ամենը, Գերմանիայի դիրքորոշումը համարում եմ չափազանց քննադատելի: Գերմանիայի քաղաքական գործիչների և դիվանագետների դիրքորոշումը կայսերական ժամանակներից մինչև մեր օրերը թրքամետ է և զիջողական, այդ պատճառով էլ թուրքերին հաջողվում է միջամտել Գերմանիայի ներքին քաղաքական կյանքում:

Անրադառնալով CDU/CSU կուսակցության 2005թ-ի փետրվարի 22-ի խնդրագրին՝ հարկ եմ համարում հիշեցնել, որ այն վտանգներով լի ծուղակ է, որը առիթ է տալու հետագա բազմաթիվ դժվարությունների: Ցեղասպանության և դեպորտացիայի փոխարեն միտումնավոր օգտագործվում է ջարդ, կոտորած, արտաքսում, վտարում բառերը, քանի որ կոտորածը ցեղասպանություն չէ, վտարումը՝ դեպորտացիա: Արտաքսված և վտարված անձը որ երկիրը որ ցանկանա և կամ հնարավոր լինի, կարող է գնալ, իսկ դեպորտացիայի ենթարկվածը այդ հնարավորությունը չունի, ուզի, թե չուզի, տարվում է պատժավայր:

Մամուլից տեղեկացանք, որ Կանաչներն ու SPD-ն (կառավարություն կազմող կուսակցությունները) ուզում են միանալ այդ խնդրագրին, միայն ոչ այդ խստությամբ և այն էլ մայիսից հետո, երբ կանցլերը կվերադառնա Թուրքիա կատարած այցելությունից:

Բեռլինի Սենատի կողմից լիազորված օտարերկրացիների միգրացիայի և ինտեգրացման հարցերով զբաղվող վարչությունը հանձնարարել էր տկ. դոկտ. Թեսա Յոֆմանին գրել մի գրքույք՝ «Յայերը Բեռլինում, Բեռլինը և հայերը» վերնագրով, ինչպես որ պարագան էր Բեռլինում ապրող մյուս ազգությունների: Թեև հեղինակը հոնորարը ստացել էր 2002թ-ի վերջ, սակայն գրքի լույս ընծայումը հետաձգվել է մինչև այս տարվա ապրիլ, քանի որ գրքույկում արձարծված է հայոց ցեղասպանության հարցը:

Ցավալի և անհանդուրժելի է, որ ցեղասպանությունից 90 տարի անց էլ Գերմանիայի օրենսդիր մարմինները համարձակություն չունեցան հետևել 17 երկրների օրինակին և ճանաչել հայոց ցեղասպանությունը՝ համաձայն ՄԱԿ-ի կոնվենցիայի: Պատճա՞ռը. Դարերից եկող թուրք-գերմանական ավանդական բարեկամությունն է՝ Գերմանիան Թուրքիայի դաշնակիցն էր Առաջին համաշխարհային պատերազմում և դաշնակիցն է նաև մեր օրերում՝ NATO-ի ուխտում:

## **Օգտագործված գրականության ցանկ**

1. Dadrian, Vahakn : Children as victims of Genocide: the Armenian case. “Journal of Genocide Research”, 2003, 5 (3) September S.424
2. Litten, Wilhelm: Persische Flitterwochen, 1926, Berlin, S. 293-335
3. Հայկական հարց, Հանրագիտարան, Երևան, 1996
4. Hofmann, Tessa: “Verfolgung, Vertreibung und Vernichtung der Christen im Osmanischen Reich, 1912-1922”, Lit Verlag, Münster, 2004